Armenian Apostolic Church of Holy Resurrection Issue 39 – August 2018

# ՃՐԱԳ JRAK

## ԾԽԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ PARISH NEWS

## MESSAGE OF FAITH

*"I know what it is to be in need, and I know what it is to have plenty. I have learned the secret of being content in any and every situation." - Philippians 4:12*

The Apostle Paul was content because he could see life from God's point of view. He focused on what he was supposed to do, not what he felt he should have. Paul had his priorities straight and he was grateful for everything God had given him. Paul had DETACHED himself from the nonessentials so that he could concentrate on the eternal. Often the desire for more or better possessions is really a longing to fill an empty place in a persons life. How can you find true contentment? The answer lies in your perspective, your priorities and your source of power .

This month we commemorate the Assumption of the Holy Mother of God on Sunday 12 August in the Armenian Church. It is one of the five major feast days on our calendar. Through oral tradition we believe that at the end of her earthly life, Mary the mother of Jesus returned to heaven to be with her Son. Her tomb was found empty when it was opened by the Apostles for viewing by St Bartholomew who was away when she passed and voices of angels were heard.

## UPCOMING DATES

**Sunday 12 August**
Feast of the Assumption of the Holy Mother of God
ACLA St Mary's Day Luncheon

**Friday 17August**
An Evening with Baroness Caroline Cox

**Sunday 19 August**
ACYA Dusk Service

## CHURCH YOUTH CONFERENCE



Four ACYA youth from our parish represented the Diocese of Australia in the Pan-Armenian Church Youth Conference held in Tsaghgadzor, Armenia from 4-8 July. The youth spent five memorable days with 450 participants from around the world visiting holy sites together, engaging in active discussion, uplifting prayer and endless song and dance. They have returned home with new global connections, excited and inspired to support a deeper understanding of their Church.

## ACYA DUSK SERVICE - 19 AUGUST

The Dusk Service began as a initiative to help our community, especially our youth, better understand the service. Too often we stand in church with absolutely no idea of what is going on, and fail to understand the significance of each aspect of the service. If this is a familiar feeling, we encourage you to come along and watch our ACYA members provide a simplified narration of the Badarak as it is performed by the clergy.




## ANNUAL ST MARY'S DAY LUNCHEON

**organised by the ARMENIAN CHURCH LADIES AUXILIARY**

**SUNDAY 12 AUGUST 2018**

**Edgarian Hall**
**Donation: $25 p.p.**
**For tickets contact the Church on 9419-8056**

**A bus service from Ryde will be available for our elderly**



## BARONESS CAROLINE COX

Lady Baroness Caroline Cox, founder of HART (Humanitarian Aid Relief Trust) will present her mission in Armenia and Karabagh and the special work of the Lady Cox Rehabilitation Centre in Stepanakert.



**FRIDAY 17 AUGUST 2018 at 7.00 p.m. EDGARIAN HALL**

Celebrating our food, culture and community
**Armenian KERMESSE**
Armenian Apostolic Church of Holy Resurrection

**Join our team as a volunteer or support our efforts with your $100 sponsorship**
**- SUNDAY 11 NOVEMBER -**

### Աղոթք Սուրբ Աստվածածնին

Աստվածածի՛ն, Քրիստոսի մայր և Հոր Միածնի ծնող, անեծքները վերացնող և մարդկային ցեղի պարծանք, Հորը հաշտեցնող արարածներիս հետ, կույսերի թագ ու պսակ և համարձակ բարեխոս մեղավորների համար:
Ամեն ինչով մեղավորս ընկնում եմ քո առջև և աղաչում իբրև նույն ինքը՝ քեզնից մարմնացածը, բարեխոսիր ինձ համար Բան Աստծու առջև, որին ծնեցիր մարմնով, որին կերակրեցիր՝ բոլորի և բոլոր կենդանյաց կերակրիչին:
... Աղաչում եմ քեզ, Լույսի մայր, ինձ համար մեղքի թողություն խնդրիր, նրա առջև դիր աղերս ու աղաչանք՝ (հիշեցնելով) նրա կրած չարչարանքները, որ ինձ համար կրեց բարերարն ու մարդասերը: Սուրբ կույս, հիշեցրո՛ւ այսքան չարչարանքս, որ թերևս ողորմի և ների բազմամեղիս, և ջնջի իմ հանցանքի գիրը, և իր անմեղ մատով ու սուրբ արյունով դրոշմի դեգերածիս անվախճան կյանքի մատյանում, իր բոլոր սրբերի մոտ, որ նրանց հետ փառավորեմ Ամենասուրբ Երրորդությունը՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

**Հովհաննես վարդապետ ԳԱՌՆԵՑԻ**








**Օգոստոսի 04, 2018թ.**

**Եփեսոսի Ս. Ժողովի 200 հայրապետների հիշատակության օր**

Եփեսոսի ժողովը տեղի է ունեցել 431 թվականին Թեոդոսիոս Փոքր կայսեր օրոք, 200 հայրերի մասնակցությամբ, որոնք հավաքվել էին՝ քննելու Կ. Պոլսի պատրիարք Նեստորի սխալ ուսմունքը: Այս ուսմունքի համաձայն՝ Հիսուս Քրիստոսի մեջ գոյություն ունեին 2 անկախ, միմյանց հակադիր բնություններ՝ աստվածային և մարդկային: Նեստորը քարոզում էր, որ Քրիստոս ծնվել է որպես հասարակ մարդ, ապա Աստվածությունը բնակվել է նրա անձի մեջ, հետևաբար Ս. Կույս Մարիամը ոչ թե Աստվածածին է, այլ մարդածին: Եփեսոսի ժողովը դատապարտում է Նեստորի վարդապետությունը և ընդունում է Ս. Կյուրեղ Ալեքսանդրացու ուսմունքը որպես ուղղափառ դավանություն, որի համաձայն Քրիստոսի աստվածային և մարդկային բնությունները գոյություն չունեն առանձին-առանձին, այլ միավորված են անշփոթ, անխառն կերպով. մի Տեր, մի Հիսուս, մի դեմք և միացյալ աստվածամարդկային բնություն: Ս. Մարիամը ոչ թե մարդածին է, այլ Աստվածածին, քանի որ նա ծնեց Աստծո Որդուն: Հռչակվում է Ս. Կյուրեղ Ալեքսանդրացու «Մի է բնութիւն բանին մարմնացելոյ» բանաձևը: Հայ Եկեղեցին չի մասնակցել այս տիեզերական ժողովին, սակայն նախորդ տիեզերական ժողովների հետ ընդունել է նրա որոշումներն ու տիեզերական հեղինակությունը:

### Կիրակի 12 Օգոստոս

Սուրբ Աստուածածնի տօն:
Պատարագէն ետք Տարեկան ճաշկերոյթ Էսկարեան սրահէն ներս, կազմակերպութեամբ՝ Եկեղեցւոյս Տիկնանց Մարմինին:
Մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 9419 8056:

### Ուրբաթ 17 Օգոստոս

Հանդիպում մը Պարոնէս Գարօլին Գոգսի հետ, Էսկարեան սրահէն ներս երեկոյեան ժամը 7–ին:

### Կիրակի 19 Օգոստոս

Երիտասարդութեան համար Երեկոյեան Սուրբ Պատարագ, Եկեղեցւոյս Երիտասարդաց Յանձնախումբի կազմակերպութեամբ:

### Կիրակի 11 Նոյեմբեր

***ՀԱՅԿԱԿԱՆ ՔԵՐՄԷՍ***

Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Պատարագէն ետք, տօնախմբութիւն հայկական մշակոյթի, արուեստի եւ ուտելիքներու: Այն անձնաւորութիւնները որոնք կը փափաքին օգնել, թող հեռաձայնեն եկեղեցւոյս գրասենեակը: